



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Սանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 210 « 29 » 09 2021 թ.

Արձանագրություն N 210

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի

2021թ-ի սեպտեմբերի 29-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 20-ը:

1. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. **Գրիգոր Ալեքսանդրի Բալասանյանի «Խորհրդային Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունները 1920-1927թթ.»** վերտառությամբ մենագրությունը հրատարակության երաշխավորելու մասին հարցը: /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
1. Հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. **Կատերինա Ալթունյանի «Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում»** վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու մասին հարցը: /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
2. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ **Մարիամ Թովհաչյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Տրանսիայի քաղաքականությունը Անդրկովկասում 1918-1920թթ.», ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ»** մասնագիտությամբ պատմական գիտությունների

թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանին:

բ/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ **Անահիտ Ղազարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Գազաուզիայի և Մերձդնեստրյան խնդիրը Մոլդովայի եվրաինտեգրման գործընթացում 1991-2020թթ.», ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ»** մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ավագյանին:

գ/ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Նուշիկ Պետրոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Գերմանիայի քաղաքականությունը Անդրկովկասում 1918-1920թթ.», ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ»** մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Պետրոսյանին:

դ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Վահե Պողոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Կուսակցական լիդերության ինստիտուտի կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում», ԻԳ. 00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

ե/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ **Լիլիթ Դալլաբյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում», ԻԳ. 00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

զ/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Վարդան Սամվելի Լաբլաջյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Պահպանողական հոսանքը քաղաքական հայագիտության գնահատմամբ», ԻԳ. 00.01- «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել փ.գ.դ., պրոֆեսոր Հ. Մանուչարյանին:

2. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. **Գրիգոր Ալեքսանդրի Բալասանյանի «Խորհրդային Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունները 1920-1927թթ.»** վերտառությամբ մենագրությունը երաշխավորել հրատարակության:

3. Հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. **Կատերինա Ալթունյանի «Ապակենտրոնացման տեսություն և տեղական ինքնակառավարում»** վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր
Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Գ. Պետրոսյան
Գ. Բալասանյան